«Կառուցողական երկխոսության հանձնառություն»
ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«Համայնքի զարգացման ծրագիրը՝ իրատեսական» ենթածրագիր

Սիսիան համայնքում 5-ամյա զարգացման ծրագրի մասին բնակչության իրազեկվածության մոնիթորինգի արդյունքների վերլուծություն
և
5-ամյա զարգացման ծրագրի վերաբերյալ առաջարկություններ

2019 թ. հունիս

Առաջարկությունների փաթեթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող «Համայնքի զարգացման ծրագիրը՝ իրատեսական» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական Միության տեսակետները:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
«Համայնքի զարգացման ծրագիրը՝ իրատեսական» ենթածրագիր

Ծրագրի նպատակ

«Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամը կարևորում է Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) հետ կայուն երկխոսությունը և փաստարկված հանրային քաղաքականությունների մշակումը, բարելավումը և դրանց ջատագովությունը, ինչպես նաև քաղաքականությունների կիրառման վերաբերյալ մշտադիտարկման անցկացումը: Ծրագրի նպատակն է նպաստել Սիսիանի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրատեսական դարձնելուն՝ հանրության մասնակցությամբ:

Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվել են տարբեր քննարկումներ, հարցումներ, հանդիպումներ՝ պարզելու, արդյոք Սիսիանի համայնքի բնակիչությունը.

- Որքանո՞վ է տեղյակ 5-ամյա զարգացման ծրագրի դրույթներին.
- Ինչպե՞ս է մասնակցում համայնքային ծրագրերի պլանավորմանը կամ քննարկումներին.
- Ինչքանո՞վ է տեղյակ աղբահանության, կրթության և շինարարության ոլորտներում իրականացվող ծրագրերին.
- Ինչպե՞ս է գնահատում բյուջեի ծախսերի արդյունավետությունը.
- Ո՞ր խնդիրների լուծումն է համարում առաջնային:

Ստորև ներկայացվում է առավել թիրախային հարցերի վերլուծության արդյունքներ

1. Համայնքին վերաբերող ծրագրերի և պլանների քննարկմանը, իրենց հավաստմամբ, մշտապես մասնակցում է հարցվողների միայն 2%-ը, ևս 18%-ը մասնակցում է ժամանակ-առ-ժամանակ, 80%-ն էլ երբեք չի մասնակցում:

Ի դեպ, կանայք ավելի քիչ են մասնակցում համայնքին վերաբերող հարցերի քննարկմանը, քան տղամարդիկ.

Առավել ակտիվ մասնակցում են 25-45 տարեկանները, չամուսնացածներն ու աշխատանք ունեցողները:

2. Համայնքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ իրենց ձայնի նշանակալիությունը հարցվողները գնահատել են հետևյալ կերպ.

Աղյուսակ1.

Լիովին նշանակալի է	0%
Հիմնականում նշանակալի է	13%
Հիմնականում նշանակալի չէ	16%
Ընդհանրապես նշանակալի չէ	52%
Դժվարացել են պատասխանել	19%

3. 5-ամյա զարգացման ծրագրի դրույթներին շատ թե քիչ տեղեկացված է հարցվողների միայն ¼-ը, ընդհանրապես տեղեկացված չէ կեսից ավելին՝ 54%-ը:

Այստեղ նույնպես, տղամարդիկ ավելի տեղեկացված են համայնքի զարգացման 5-ամյա ծրագրի դրույթներին, քան կանայք.

Առավել տեղեկացված են 25-55 տարեկանները,ինչը զարմանալի չէ, քանի որ որպես տեղեկատվության հիմնական աղբյուրներ նշվել են.

Աղյուսակ 2.

Facebook-ը	27%
Համայնքապետարանի կայքը	19%
Համայնքապետարանի տպագիր հայտարարությունները	14%
Համայնքապետարանի աշխատողները	14%
Այլ	13%
ԶԼՄ-ները	8%
Համագյուղացիները	5%

Առավել չտեղեկացվածներն ուսանողներն ու թոշակառուներն են:

4. Համայնքում վերջին 2 տարիների ընթացքում համայնքապետարանի կողմից աղբահանության, կրթության և շինարարության հետ կապված իրականացված ծրագրերին տեղյակ է հարցվողների միայն 40%-ը *(տես՝ Աղյուսակ 3):*

Աղյուսակ 3.

Տեղեկացվածությունը աղբահանության, կրթության և շինարարության հետ կապված իրականացված ծրագրերին

Լիովին տեղյակ են	3%
Հիմնականում տեղյակ են	37%
Հիմնականում տեղյակ չեն	29%
Ընդհանրապես տեղյակ չեն	24%
ԴՊ/ՀՊ	7%

Բոլոր հարցվողները բացարձակ անտեղյակ էին 5-ամյա զարգացման ծրագրում աղբահանության, կրթության և շինարարության համար նախատեսված բյուջեի չափից:

Սակայն, դրա հետ մեկտեղ, հարցվողների գերակշռող մեծամասնությունը (63%) կարծում է, որ եղած բյուջեի ծախսն անարդյունավետ է կազմակերպվում *(տես՝ Աղյուսակ 4):*

Աղյուսակ 4.

Բյուջեի ծախսի կազմակերպման արդյունավետության գնահատումը

Արդյունավետ է	0%
Հիմնականում արդյունավետ է	12%
Հիմնականում արդյունավետչէ	27%
Անարդյունավետ է	39%
ԴՊ/ՀՊ	22%

Հարցվողների կարծիքով, 5-ամյա զարգացման ծրագիրը պետք է ուղղված լինի հետևյալ խնդիրների լուծմանը.

Աղյուսակ 5.

Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում, բարեկարգում	25%
Աղբահանություն (աղբատար մեքենաների ձեռքբերում, աղբամանների ավելացում, կանոնավոր աղբահանություն)	15%
Կանաչապատում և խաղահրապարակների կառուցում	10%
Բնակելի շենքերի վերանորոգում և բարեկարգում (շենքերի տանիքների, մուտքերի վերանորոգում, վթարային շենքների ամրացում)	8%

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«Համայնքի զարգացման ծրագիրը՝ իրատեսական» ենթածրագիր

Կոյուղագծի կառուցում և վերանորոգում	5%
Խմելու նոր ջրագծի կառուցում, եղածների վերանորոգում	5%
Գազաֆիկացում	3%
Նոր մանկապարտեզներ իբացում, եղածներում խմբերի ավելացում	3%
Փողոցների լուսավորություն	3%
Աշխատատեղերի բացում	3%
Քաղաքային և միջհամայնքային տրանսպորտի աշխատանքի կարգավորում	3%

Հարցվողների գերակշռող մեծամասնության (80%) համոզմամբ, համայնքապետարանը որևէ քայլ չի ձեռնարկում այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Սակայն, միաժամանակ, հարցվողները հիմնականում բավարար են գնահատել աղբահանության վիճակը Սիսիան քաղաքում: Թեև նույնը չենք կարող ասել գյուղական բնակավայրերի մասին:

Հարցվողների մեծամասնությունը (67%) բավարարված է մանկապարտեզների առկա վիճակով:

Հարցվողների գրեթե 60%-ը մշակույթի և սպորտի կազմակերպումը համայնքներում գնահատել է որպես ***խիստ անբավարար***:

Գրեթե բոլոր հարցվողները նշել են ազատ ժամանցի կազմակերպման հնարավորությունների բացակայությունը համայնքում:

Հարցվողների 94% էլ որպես ***շատ վատը*** գնահատել է ճանապարհների և կամուրջների շինարարությունը/պահպանումը:

- Ծրագրի շրջանակներում բնակավայրերում իրականացված հանդիպումները ներառել են ոչ միայն քանակական և որակական հետազոտություններ, այլ նաև առաջարկությունների հավաքագրում: Յուրաքանչյուր հանդիպման վերջում նախատեսվել է ժամանակ և հնարավորություն մասնակիցների կողմից բարձրաձայնված առաջարկների հավաքագրմանը կապված համանքի զարգացման հնգամյա ծրագրի, համայքային կյանքի բարելավման, բնակչության մասնակցությունը և իրազեկությունը բարձրացմանն ուղղված մեխանիզմների վերաբերյալ:

Հանդիպումների ընթացքում մանրամասն քննարկվել է համայնքայն զարգացման ծրագիրը, հատկապես՝ աղբահանության, կրթության և շինարարության ոլորտներին վերաբերող ծրագրերը:

Առաջարկները մշակվել են և համակարգված ներկայացվում է ստորև.

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
«Համայնքի զարգացման ծրագիրը՝ իրատեսական» ենթածրագիր

1. «ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ծրագիրը ներկայացված է համայնքային զարգացման ծրագրերի սահմանված առաջնահերթություններում վեցերորդը: Ըստ իրականացված հետազոտությունների և հարցումների համայնքային խնդիրների առաջնահերթությունների սանդղակում բնակիչները երկրորդ կարևոր խնդիրն են համարել՝ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների բարեկարգման ծրագրից հետո: Նաև համայնքային զարգացման ծրագրում առկա աղբահանության ծրագրում չի արտացոլվում, և / կամ պարզ չէ, թե որ բնակավայրերն են ներգրավված հնգամյա ծրագրում, ինչ է նախատեսվում յուրաքանչյուր բնակավայրի համար:

Առաջարկվում է ծրագրում նախատեսել Զորագետ թափվող աղբի կանխման և այլընտրանքի առաջարկման նախագիծ: Զորագետը հոսելով 4 բնակավայրերով, որը համարվում է նաև ոռոգման աղբյուր, ամբողջությամբ աղտոտվում է հենց Շենաթաղ բնակավայրից սկսած: Աղբը թափվում է հատկապես այն բնակավայրի բնակիչների կողմից, որտեղ աղբահանություն չի իրականացվում: Գետի ափերը ողողված է պլաստիկե շշերով, պոլիէթիլենային տոպրակներով և այլ չքայքայվող նյութերով: Բնակիչները ներկայացնում են, որ 21 –րդ դարում մարդիկ անկաշկանդ կարողանում են աղբը պարկերով նետել գետը և ՏԻՄ- ի կողմից չկա ոչ հսկողություն և ոչ էլ ձեռնարկում է որևէ քայլ:

Բնակչության կողմից տարակուսանք է առաջացնում 230մլն դրամ բյուջե ունեցող ծրագրի շահառուները ո՞ր բնակավայրի բնակիչներն են և քանի հոգի են: Նաև՝ միջազգային կազմակերպությունները ինչու՞ են համարվում ծրագրի հիմնական շահառու:

Առաջարկվում է ծրագրի նպատակը սահմանել չափելի և հասանելի:

2. Ծրագրերում առկա չորրորդ ծրագիրը «ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ» բնակչության շրջանում արվա հարցման արդյունքում առաջնահերթությունների սանդղակում իններորդն է: «ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ» և տասնվեցերորդ ծրագիրը «ԲԱՐԵԿԱՐԳ ՀԱՄԱՅՆՔ», երկու դեպքում էլ ենթադրում է համայնքի լուսավորություն: Ծրագրի այս հատվածը ևս հարցեր է առաջացնում բնակչության շրջանում:

3. Կրթության ոլորտում առաջարկվում է ներկայացնել նպատակը և արդյունքները չափելի և ներկայացնել, թե որ ՆՈՒՀ – երի, կամ գործող խմբերի համար է նախատեսված ծրագիրը: Այն բնակավայրերը, որոնք ներգրաված չեն ծրագրում, նախադպրոցական տարիքի երեխաները ինչպե՞ս պետք է դառնան ծրագրի շահառու: Արդյոք առկա է հնարավորություն այդ երեխաներին ներգրավելու նախադպրոցական կրթության ոլորտում:

4. Շինարարության ոլորտում նկատելի և որոշակի բացթողումներ

- ✓ Համայնքային զարգացման ծրագիրը, ոչ հիմնական նպատակների բաժինը, և ոչ էլ ծրագրային հատվածը չի նպաստում հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավմանը: Միայն նշվում է, որ կկազմակերպվեն համայնքային միջոցառումներ հաշմանդամություն ուեցող անձանց մասնակցությամբ: Շինարարության ոլորտում 5 տարիների ընթացքում չի արտացոլվում մեր կողքին ապրող մարեդկանց առավել կարևոր խնդիրը և իրավունքը՝ դա է ազատ տեղաշարժվելու իրավունքը:
- ✓ ***Առաջարկվում է*** Կարևորություն ունեցող շենքերի՝ Համայնքապետարան, Ոստիկանություն, Իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն, մուտքի մոտ կառուցել հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հարմարավետ թեքահարթակներ:
- ✓ Սիսիան քաղաքում մայթերի գործարկում, որը գրեթե անանցանել են:

- Կան նաև առաջարկներ, որոնք չեն ներառվում համայնքային զարգացման հնգամյա ծրագրում, սակայն կարևոր են բնակչության համար:

- Առաջարկները հետևյալն են.

- ✓ Զմռանը դեպի դպրոցներ և մանկապարտեզներ տանող ճանապարհների ժամանակին մաքրում ձյունից:
- ✓ Դպրոցական երեխաների առօրյան հետաքրքիր ու բազմաբովանդակ դարձնելու համար զարգացման կենտրոնների ստեղծում համայնքի տարածքում:
- ✓ Սիսիանի Շիրվանզադե 2ա շենքի հարակից տարածքը ամբողջությամբ, 2 կողմերով, անմխիթար վիճակ
- ✓ Դարբաս բնակավայրում կան բնակիչներ, ովքեր ջուր չունեն: Ջրի որակը մեծ խնդիր է:
- ✓ Կա նաև խնդիր Շաքի բնակավայրում խմելու ջրի ջրատարն անմխիթար վիճակում է: Խնդիրներ կան տապված Վիոլիա ջուր ընկերության հետ:
- ✓ ՆՈՒՀ-երում դաստիարակների վերաբերմունքի փոփոխություն: Առաջարկվում է հաճախ վերապատրաստել դաստիարակներին:
- ✓ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը ՆՈՒՀ-եր: Փոխել վերաբերմունքը երեխաների և ծնողների հանդեպ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«Համայնքի զարգացման ծրագիրը՝ իրատեսական» ենթածրագիր

- ✓ Ծնողների շրջանում իրազեկության պակաս չափորոշիչների վերաբերյալ (թե որ տարիքի երեխան քանի ժամ պետք է նստած անցկացնի մանկապարտեզում. որ տարիքի համար ինչ է նախատեսվում):
- ✓ Սպորտային խմբակների սակավություն համայնքում:
- ✓ Մշակութային կյանքի ակտիվացում հատկապես գյուղական բնակավայրերում:
- ✓ Երաժշտական դպրոցում կիթառի դասարանի ստեղծում:
- ✓ Կենտրոնական կամրջի մերձակա տարածքը անմխիթար է և բավականին վտանգավոր է: Բացակայում են վանդակաճաղերը: